«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան**

ՀԵՂԻՆԱԿ **ՍԵՎԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ԽՈՒՄԲ 4 /ԱՌԱՐԿԱ/ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ----------

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ----------

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասիպլանավորմաննպատակները

Դասիններկայացվողպահանջները

Դասիպլանավորմանպարտադիրբաղադրիչները

Դասապլանիկազմմանսկզբունքներընդրահիրականացմանքայլերը

Անդրադարձնամփոփում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Ձևավորել նոր աառարկայական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան կարողունակահեն ուսումնառության ապահովմանը նպաստող դասերի պլանավորման հմտություններ:
- Զարգացնել ուսուցիչների՝ արդի պահանջներին համապատասխանող դասապլաններ կազմելու հմտությունները:

Ակնկալվողարդյունքները ՝

1. հաստակ ձևակերպիդասինպատակներնուվերջնարդյունքները՝ օգտվելով նոր առարկայական չափորոշչից ու ծրագրերից՝ կիրառելովհամապատասխանբայեր (Բլում-Անդերսոնի տաքսոնոմիա),
2. ընտրի տվյալ թեմայի ուսուցման և ուսումնառության արդյունավետ մեթոդներ, ապահովի միջառարկայական և ներառարկայական կապերը,
3. Պլանավորիսովորողներիհնուսուցչիգործողությունները, կատարիարդյունքներիգնահատումնանդրադարձ (ռեֆլեքսիա),
4. Կազմի արդի պահանջներին համապատասխանողդասիպլան:

Ինչ է ԴԱՍԸ

ԴԱՍԸ

Ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգի որոշիչ տարրն է։ Դասապրոցեսում իրականացվում է սովորողների գիտելիքների ձեռքբերումը, կարողությունների ու հմտությունների ձևավորումը, նրանց՝ որպես անհատի կայացման ճանապարհը։

Ուսուցումը կազմակերպվում էավելի հաճախ դասապրոցեսի ընթացքում, երբ իրականացվում է սովորողների գիտելիքների ձեռքբերումը, կարողությունների ու հմտությունների ձևավորումը, նրանց՝ որպես անհատի կայացման ճանապարհը։

Ինչպե՞ս է կազմակերպվում դասը։

- Այն ուսումնական պրոցեսի մի հատված է, որը կարող է կազմակերպվել դասարանում, արհ/վեստանոցում, թանգարանում, այգում կամ այլուր, որտեղ 45 րոպեի ընթացքում՝
- ուսումնասիրվում է ինչ-որ թեմա,
- իրականացվում է ուսումնական ծրագրի կրկնություն,
- կատարվում է գրավոր աշխատանք,
- ներկայացվում է ուսումնասիրվածը, յուրացվածը եւ այլն։

ԴԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- ուսումնադաստիարակչական նպատակների միասնությունը,
- դասի հստակ պլանավորումն ու նախապատրաստումը,
- անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութերի առկայությունը,
- դասին աշակերտների ֆիզիկապես, բարոյապես և հոգեբանորեն պատրաստ լինելը,
- ուսուցչի հետ համագործակցելու աշակերտների

պատրաստակամությունը,

- հին ու նոր դասերի միջև կապի ապահովումը,
- համապատասխան ուսումնական մոտիվացիայի ձևավորումը,
- գործնական և ինքնուրույն աշխատանքների կարողությունների և հմտությունների ձևավորումը,
- դասի անդրադարձը:

ԴԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- նպատակների միասնությունը,
- դասի հստակ պլանավորումը եւ նախապատրաստումը,
- դասի համար անհրաժեշտ բոլոր ուսումնաօժանդակ պարագաների առկայությունը,
- դասին աշակերտների ֆիզիկապես, բարոյապես եւ հոգեբանորեն պատրաստ լինելը,
- դասի գնահատում- անդրադարձը,
- ուսուցչի հետ համագործակցելու աշակերտների պատրաստակամությունը,
- հին ու նոր դասերի միջեւ կապի ապահովումը,
- համապատասխան ուսումնական մոտիվացիայի ձեւավորումը,
- պրակտիկ կարողությունների եւ ինքնուրույն աշխատանքի կարողությունների ու հմտությունների ձեւավորումը

Դասի տիպերը

1. Նոր ուսումնական նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)
3. Ընդհանրացման եւ համակարգման դաս
4. Համակցված դաս
5. Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների շտկման եւ վերահսկման դաս

Դասի կառուցվածքը

Ուսումնառության ընթացքում առաջացած եւ ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարը կոչվում է դասի կառուցվածք:

Ըստ կառուցվածքի դասերը լինում են

1. Նոր նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ամրապնդման եւ զարգացման դաս
3. Կարողությունների եւ հմտությունների ձեւավորման դաս
4. Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների կիրառման դաս
5. Կրկնողության դաս
6. Կրկնողական-ընդհանրացնող դաս
7. Ստուգողական կամ սխալների ուղղման դաս
8. Համակցված դաս

Դասի պլանավորում

Դասապլան կազմելու հիմնական նպատակն այն է, թե ինչպես օգնել աշակերտներին ուսումնական ակնկալվող արդյունքներին հասնելու համար:

Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործականլուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք ուղղված ենդասի նպատակների իրականացմանը և ցանկալի վերջնարդյունքներին:

Դաս պլանավորելիս ուսուցիչը պետք է պատասխանի 4 հարցի

- Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում։
- Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու աշակերտները միասին։
- Ի՞նչ պետք է անեն աշակերտներն իրար հետ՝ առանց ուսուցչի միջնորդության։
- Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն։

Ուսուցման խնդիրներ

Ուսումնառության խնդիրներն այն են, թե ուսուցիչը ինչ է նախատեսում ուսուցանել կամ լուսաբանել դասի ընթացքում.
ուսումնառության նպատակների համեմատ նրանք ավելի կոնկրետ բնույթի են։

➢Պիտի բխեն նպատակից։

➢Պիտի ծառայեն վերջնարդյունքների ձեւավորմանը։

➢Պիտի հասկանալի լինեն սովորողներին եւ հետաքրքրեն։

Դասի խնդիրների բաղադրիչներն են

- Կրթական
- Դաստիարակչական.
- Զարգացնող

Վերջնարդյունք

Ինչո՞վ են ուսումնառության վերջնարդյունքները տարբերվում ուսումնառությաննպատակներից եւ ուսումնառության խնդիրներից

Այս հասկացությունները հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ, եւ դրանք բոլորը կապված են դասավանդման եւ ուսումնառության հետ:

Սակայն ուսումնառության վերջնարդյունքների, նպատակների եւ խնդիրների միջեւ եղած տարբերությունն այն է, թե ով է իրականացնում գործողությունները: Ուսումնառության նպատակները եւ խնդիրները, ընդհանուր առմամբ, նկարագրում են, թե ինչ էմտադիր անել ուսուցիչը, ծրագիրը կամ դպրոցը, մինչդեռուսումնառության վերջնարդյունքը պիտի լինի չափելի եւ հասանելի, եւ որին սովորողը կարող է հասնել դասի կամ ուսման (դասընթացի, նախագծի) ավարտման արդյունքում:

Բուն դասը

Սա բուն դասապրոցեսն է, որի ընթացքի արդյունավետ կազմակերպումը ուսուցչից որոշակի ջանք, եռանդ և մանկավարժական գիտելիքներ ու տաղանդ է ենթադրում:

Դասի ընթացքը կարելի էբաժանել երեք մասերի՝

ակտիվացման կամ խթանման,

նոր գիտելիքների ձեռքբերման

ձեռք բերած գիտելիքի ամրապնդման փուլեր /ԽԻԿ/:

Խթանման կամ ակտիվացման փուլը դասի սկզբնական մասն է:

- Այս փուլի հիմնական խնդիրն է խթանելու սովորողների ակտիվ մտածողությունը, կենտրոնացնելու և դասապրոցես ներգրավելու:
- Այս փուլին նպատակահարմար է տրամադրել մոտ 10-15 րոպե:

Խթանման փուլի հիմնական նպատակներն են.

- Խթանել աշակերտների մտածողությունը, կենտրոնացնելով քննարկվելիք թեմայի շուրջ,
- Նախապատրաստել նրանց նոր թեմայի ուսումնասիրմանը: Այն կարելի է կատարել նախորդ նյութի հարցման, ամփոփման միջոցով, հատկապես, երբ նոր թեման հնի շարունակությունն է:
- Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները:
- Ձևավորել ձգտում գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելունկատմամբ

Իմաստի ընկալման փուլ

- Դասապրոցեսի երկրորդ մասն է, երբ սովորողները ուսումնասիրում են նոր նյութը: Այն անվանում են նոր գիտելիքների ձեռքբերման, կամ պայմա-նականորեն՝ իմաստի ընկալմանփուլ: Այս փուլի հիմնական նպատակներն են.
- Զարգացնել նոր գաղափարների նկատմամբ հետաքրքրությունը,
- Ապահովել տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման մեխանիզմը,
- Շաղկապուել ունեցած և ձեռք բերած նոր տեղեկատվությունը

Դասի այս փուլին հատկացվում է ավելի շատ ժամանակահատված / մոտավորապես դասաժամի տևողության կեսը, 20-25 րոպե/, քան մյուս երկու փուլերին, քանի որ հենց այս փուլն է, որ ապահովում է ժամանակակից մեթոդների հիմնական նպատակը և գործառույթը, այն է՝ դասարանում՝ դասապրոցեսի ընթացքում դասանյութը սովորելու:

<u>Մեթոդներ և մեթոդական հնարներ իմաստի ընկալման փուլի համար</u>

Խմբավորում

T-աձև աղյուսակ

Մ -աձև աղյուսակ

Փոխներգործուն գրառումների համակարգ

Խճանկար

Դասախոսություն

Շրջագայություն պատկերասրահում

Կենտրոններով աշխատանք

ԳՈՒՍ

Համառոտ դասախոսություն,

Քառաբաժան,

Ապագայի անիվ

Խորանարդում,

Խճանկար,

Ուղղորդված ընթերցանություն,

Կշռադատման փուլ

- Դասապրոցեսի երրորդ մասն է ,երբ սովորողները արդեն ուսումնասիրել են նոր նյութը, և ուսուցչին անհրաժեշտ է պարզել, թե այդ օրվա դասանյութի ո՞ր մասը նրանք յուրացրին դասարանում,այն է՝ պարզել սովորողների մնացորդային գիտելիքները:
- Այս փուլը պայմանականորեն անվանում են կշռադատման փուլ, կամ ձեռք բերած գիտելիքի ամրապնդման փուլ, որի համար կարելի է տրամադրել դասաժամի տևողության մեկ քառորդ մասը:
- ա.որպեսզի սովորողները կարողանան արտահայտել նոր ստացած

տեղեկատվությունները իրենց բառերով և ձևակերպումներով,

- բ. կարողանան միաձուլել իրենց ունեցած գիտելիքները նոր ստացածի հետ

  և ամրապնդեն դրանց միջնգաղափարական կապը :

- գ.կարողանան ի մի բերել,արժևորել ստացած գիտելիքները և կարևորեն ցանկացած իրավիճակում դրանք կիրառելու հմտությունները:

  Իհարկե դասի վերջին փուլում առավել կիրառելի են դասի սկզբում կիրառվածներին՝ հավելած «կմախք», «պատճառահետևանքային կապ», «գաղափարների քարտեզ», «խճանկար» մեթոդները:

Մեթոդներ և մեթոդական հնարներ դասի ամփոփման փուլի համար

- Խմբավորում
- T-աձև աղյուասակ
- M -աձև աղյուսակ
- Հասկացություններիաղյուսակ
- Վենիդիագրամ
- Քառաբաժան
- Խորանարդում
- Անկյուններ
- Խճանկար
- ԳՈՒՍ
- Ֆրայերի մոդելը
- Գիտելիքի դոմինո
- Մտքերիհոսք
- Սկսել, դադարեցնել, պահել

- Հարցեր
- Մետաիմացությանթերթիկ
- Ինձնիցառաջհարցրուերեքհոգու
- Դասիզեկուցող
- Ես-Դու-Մենք
- Լուսակիր
- Կիսատնախադասություն
- Խաթարվածհերթականություն
- Երկու բան
- Վարդ, փուշ, բողբոջ
- Տասը տարի անց

Դասապրոցեսի բոլոր փուլերի համար էլ գոյություն ունեցող մեթոդական վարժությունները բազմաթիվ ու բազմազան են: Ընտրությունը կախված է դասավանդողի հակումներից, դասի նպատակից և տրամադրված ժամանակից:

Այս վարժություններից շատերը կարող են կիրառվել մեկ դասաժամի ընթացքում, սակայն մի մասի կիրառումն էլ պահանջում էերկար ժամանակահատված: Ուստի դրանցից մի քանիսը կարելի է կիրառել նաև երկու դասաժամի ընթացքում:

Դասից հետո:

Դասից հետո կատարվում է հավելյալ աշխատանք: Անհրաժեշտ է վերլուծել կատարված աշխատանքը և պարզել, թե.

- Ուսուցիչը հասա՞վ իր առջև դրված նպատակներին,
- Ի՞նչ չափով և ինչպե՞ս իրականացան նպատակներին հասնելու ակնկալիքները,
- Ճի՞շտ էին արդյոք ընտրված մեթոդները,
- Ժամանակի բաշխումը որքանո՞վ էր իրատեսական,

➢ Ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպե՞ս

Ինչպես ճիշտ գրել դասի պլան

- ԴԱՍԻ ՊԼԱՆԸ գրվում է հակիրճ՝ ըստ դասի հիմնական փուլերի։ Հաճախ դասի պլան- համատոտագրության մեջ ներկայացվում է հետևյալ բովանդակությամբ աղյուսակի տեսքով՝
- 1. Կազմակերպչական մաս— 2-3 րոպե
- 2. Նոր գիտելիքների հաղորդում — 8-10 րոպե
- 3. Աշակերտների գործնական աշխատանք — 20-26 րոպե
- 4. Տնային առաջադրանքի հանձնարարում— 3-5 րոպե
- 5. Դասի ամփոփում — 1-2 րոպե
- Կարելի է նշել նաև այն տնային առաջադրանքը, որն աշակերտները կստանան հաջորդ դասին։

ԱՆԴՐԱԴԱՐՁ



Արդյունավետ դասի պլանավորման գործիքները

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու գրավականը դասի ճիշտ պլանավորումն է։

Ճիշտ պլանավորման արդյունքում միայն կարող ենք ունենալ արդյունավետ գործընթաց։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԿԱԻ <<Դաստիարակչական աշխատանքը դպրոցում>>, Երևան 2012
2. Հանրակրթական պետական չափորոշիչ, Երևան 2022
3. Ռուզաննա Ստեփանյան Կրթական Արհեստանոց